

## Ճպուռը եւ մրջինը



Այս աշխատանքին նպատակն է, «Ճպուռը եւ մրջինը» առակէն մեկնելով՝ քննարկել աշխատանք, բաժնեկցիլ, ստեղծագործութիւն, արուեստ եւ նմանօրինակ յղացքները ու միջլրացական յարաբերութիւնները:



Ինչպէս բոլոր քննարկումներու պարագային, հոս ալ շատ բնական է, որ արծարծուած գաղափարներուն շուրջ կեցուածք մը ունենաք: Մանաւանդ երբ նախապէս մեզի ծանօթ գրական երկի մը վերաբերեալ մտապատկերներով բռնաւորուած ըլլանք: Յատկապէս այստեղ ներկայացուած նիւթին առնչութեամբ՝ կարելի է ձերբազատուիլ կարծրատիպերէն: Յիշենք, որ ընդհանրապէս «Ճպուռը եւ մրջինը» առակը կը գործածուի բարոյական երկուութիւն մը ստեղծելու նպատակով, ուր ճպուռը «ծոյլ» է եւ յետոյ պիտի գղջայ իր ծուլութեան, իսկ մրջինը «աշխատասէր» է եւ պիտի քաղէ իր աշխատանքին պտուղները: Այս քննարկումը առիթը կու տայ կարծրատիպերէն անդին անցնելու, եւ տարբեր արժէքներ արժեւորելու, որոնց կարգին՝ անհատականութիւն զարգացնելը, արուեստով զբաղիլը, բաժնեկցիլը եւ ասոնց հետ կապուած հաւասարեցնող մօտեցումները, հեռու՝ ամէն տեսակի խտրութենէ: Ինչպէս ուղեկիցներու ուղեցոյցին մէջ յաճախ կը մատնանշենք, պէտք չէ մոռնալ, թէ քննարկումներուն նպատակը մասնակիցներուն որոշակի գաղափար մը սորվեցնել, փոխանցել կամ ստիպել չէ՛, այլ յղացքներու մասին քննադատական մօտեցումներով մտածել է:

Մասնակիցներուն հարցուցէք, թէ «Ճպուռը եւ մրջինը» առակին ծանօթ են, թէ՞ ոչ: Գիտցողները կրնան նիւթը պատմել սակայն շփոթութիւններու տեղի չտալու համար՝ կարելի է որ հրահրիչը անգամ մը ամբողջութեամբ եւ բարձրաձայն լսուի:

Քննարկումի ընթացքին գործածեցէք **Յղացքներու քարտէս** մեթօտը, որպէսզի մասնակիցները կարենան դիւրութեամբ հետեւիլ արծարծուած գաղափարներուն:

## Քննարկումի հրահրիչ

Մրջինը ծմրան իր ուտելիքը ամբարել կարենալու համար, ամբողջ ամառը կ'աշխատի: Մինչ, ճպուռը կիթառ կը նուագէ ու կ'երգէ, ինքզինքը եւ շուրջինները կը զուարճացնէ: Հետեւաբար ճպուռը եւ իր շուրջինները ամառը հաճոյքով կ'անցընեն: Բայց ամառը կ'անցնի եւ կը հասնի ձմեռը: Մրջինը ճամբուն վրայ կը հանդիպի ճպուռին: Ճպուռը առանց ուտելիքի մնացած է, անօթի է: Մրջինէն օգնութիւն կը խնդրէ:

## Քննարկումի հարցում

Ըստ ձեզի՝ մրջինը ճպուռին պէտք է օգնէ՞, թէ ո՛չ: Ինչո՞ւ:

## Յղացական հարցադրումներ

- Ի՞նչ կը նշանակէ աշխատանք:
- Հասարակութեան կողմէ ի՞նչ բան ծուլութիւն կը համարուի:
- Ի՞նչ է յարաբերութիւնը արուեստին եւ աշխատանքին միջեւ:
- Ե՞րբ պէտք է արուեստը նիւթական փոխհատուցումի արժանանայ:
- Ի՞նչ կը նշանակէ ընտրութիւն: Ի՞նչ կը նշանակէ պարտադրանք:
- Աշխատիլը ընտրութիւն է, թէ պարտադրանք:
- Կա՞յ կարիքաւորներու պէտքերը հոգալու պատասխանատուութիւն մը:

## Հաւանական պատասխաններ

- Պէտք չէ օգնէ, որովհետեւ այն օրերուն՝ երբ մրջինը կ'աշխատէր ու ծմրան ուտելիք կ'ամբարէր, ճպուռը երգելով կը զուարճանար:

Հոս կարելի է հարցնել հետեւեալ հարցումները.

«Ամբարելու համար անդադար աշխատիլը ի՞նչ նպաստ կամ ի՞նչ վնաս կրնայ բերել մեր կեանքին»:

«Աշխատիլը սահման մը պէտք է ունենա՞յ: Ճպուռին նման՝ մրջինն ալ զուարճանալու ժամանակ պէտք է տրամադրէ՞ր»:

«Ճպուռը երգած ատեն միայն կը զուարճանա՞ր, թէ՞ ինքն ալ աշխատանք կը տանէր»:

- Պէտք չէ օգնէ, որովհետեւ երբ ճպուռը ծուլութիւն կ'ընէր, մրջինը կ'աշխատէր իր ապագային համար:  
Հոս կարելի է քննարկել ծուլութիւն յղացքը: Քննարկումը կարելի է խորացնել հետեւեալ հարցումներով. «Ի՞նչ կը նշանակէ ծուլութիւն: Հասարակութեան կողմէ ի՞նչ բան ծուլութիւն կը համարուի: Ծուլութիւնը չափանիշ մը ունի՞: Մեր ո՞ր մէկ ըրածով (կամ չըրածով) հասարակութեան կողմէ ծոյլ կը նկատուինք: Ինչ որ հասարակութիւնը կ'ակնկալէ կամ կը փափաքի որ ընենք արդեօք միշտ մե՛ր ակնկալութիւններուն եւ մե՛ր փափաքներուն կը համապատասխանէ՞»:  
Իրենց կեանքէն քաղուած օրինակներով մտածել կարենալու համար, մասնակիցներուն կրնաք նաեւ հետեւեալ հարցումները հարցնել. «Ձեր ո՞ր մէկ ըրածը ծուլութիւն կը նկատուի: Ըստ ձեզի ատոնք ծուլութի՞ւն են»:
- Պէտք չէ օգնէ, որովհետեւ եթէ օգնէր՝ մրջինին ուտելիքը կը պակսէր եւ անօթի կը մնար:  
Կարելի է քննարկել «ուրիշներու հետ բաժնեկցելու» նիւթը, հարցնելով. «Մեր ունեցածները որո՞նց հետ եւ ի՞նչ քանակութեամբ կրնանք բաժնեկցիլ ուրիշներու հետ»:  
(Յատուկ բաժնեկցելու նիւթը քննարկելու համար, կրնաք տեսնել «Թրթուրն ու խխունջը» նիւթը Փիլիպարտէզին կայքէջին վրայ):
- Պէտք չէ օգնէ, որովհետեւ անօթի մնալը ճպուռին յանցանքն է. նախընտրեց չաշխատիլ, հետեւաբար անօթի մնաց: Պէտք է ընդունի իր որոշումին հետեւանքները:  
Կարելի է քննարկել ընտրութիւն եւ պարտադրանք յղացքները հետեւեալ հարցումներով. «Ի՞նչ կը նշանակէ բան մը ընտրել: Ի՞նչ բան կրնանք ընտրել: Ըստ ձեզի, մրջինին աշխատելը իր ընտրութի՞ւնն էր»:
- Պէտք է օգնէ, որովհետեւ ճպուռը ուտելիքի պէտք ունի:  
Հոս կարելի է կրկին քննարկել բաժնեկցելու նիւթը: Նաեւ կարելի է խորացնել քննարկումը հետեւեալ հարցումներով. «Ուրիշներու կարիքներուն պատասխանատուն մե՞նք ենք: Ուրիշներու հանդէպ ինչպիսի՞ պատասխանատուութիւններ կրնանք վերցնել: Օրինակ, եթէ մեր ազգականը, ընկերը կամ դրացին որեւէ բանի մը կարիքը զգայ, անհրաժեշտ է որ հոգանք: Հոս առաջնահերթութիւն մը կա՞յ: Եթէ կայ, ի՞նչ հիման վրայ պիտի որոշուի: Օրինակ, մօտիկութեա՞ն չափի համաձայն, թէ՞ կարիքի՞ չափին համաձայն»:

- Պէտք է օգնէ, որովհետեւ ճպուռն ալ երգելով կը զուարճացնէ աշխատող մրջինները:

Հոս կարելի է քննարկել արուեստի եւ աշխատանքի միջեւ յարաբերութիւնները: Քննարկումը կարելի է շարունակել հետեւեալ հարցումներով. «Ուրիշները զուարճացնելը հատուցում մը պէտք է ունենա՞յ: Օրինակ երգելը, նուագարան մը նուագելը, պատկեր գծելը աշխատա՞նք են: Ասոնք ե՞րբ աշխատանք կը նկատուին: Ո՞ր պարագաներուն վարձատրութեան պէտք է արժանանան: Արուեստը աշխատա՞նք է»:

- Պէտք է օգնէ, որովհետեւ մրջիններուն գործը ուտելիք ամբարել է, իսկ ճպուռին գործը՝ երգել:

Հետեւեալ հարցումներով մասնակիցներուն կարելի է մտածել տալ «Ի՞նչ կը նշանակէ աշխատանք» նիւթին շուրջ. «Մրջիններուն աշխատիլը կամ ճպուռին երգելը նոյն չափով աշխատանք կը համարուի՞ն: Այս երկուքին միջեւ տարբերութիւն մը կա՞յ. եթէ կայ, ինչպէ՞ս բացատրել այդ տարբերութիւնը»:

Շատ կարեւոր է, որ վերջին երկու կէտերով նշուած «արուեստ-աշխատանք» յարաբերութիւնը քննարկումի նիւթ դարձուի հանդիպումի ընթացքին: Ճպուռին արուեստով զբաղած ըլլալը, արուեստին աշխատանք ըլլալ-չըլլալու խնդիրը կարեւոր են, եթէ կ'ուզենք այս պատմութեան մօտենալ քննական ակնարկով: Եթէ արտայայտուած պատասխանները բաւարար չեն, կրնաք հարցնել. «Կը կարծե՞ք, որ ճպուռին կիթառ նուագելը կարելի է բացատրել միայն «զուարճանալ» յղացքով: Երաժշտութեամբ զբաղող անձ մը միայն «զուարճացող եւ զուարճացնող» կը նկատուի: Երաժշտութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, պար եւ նման զբաղումներ ուրիշ ի՞նչ բան կրնան նշանակել»: Նման հարցումներով կրնաք արուեստի մասին քննարկում մը սկզբնաւորել:

- Պէտք է օգնէ, որովհետեւ մրջինին համար բնականը ուտելիք ամբարել է, իսկ ճպուռին համար՝ երգելը:

Հետեւեալ հարցումներով մասնակիցներուն կարելի է մտածել տալ «բնական եղող – բնական չեղող» խնդիրէն մեկնելով՝ կարելի է քննարկել փափաք, ընտրութիւն, պարտադրանք, պատասխանատուութիւն յղացքները: Նաեւ կարելի է հարցնել թէ «Ի՞նչ կը նշանակէ բնական»: Ի՞նչ կը նշանակէ բնութեան համեմատ վարուիլ: Պէ՞տք է մեր բոլոր արարքները բնութեան յարմար բաներ ըլլան»: